ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակ

Լանա Կառլովա, համակարգող

neo@erasmusplus.am

010 58 09 63, 091 21 62 58

Հայաստանում
Էրազմուս+
ազգային գրասենյակ

ԱՄՍԱԹԻՎ

09.05.2019թ.

Ավստրիայի համալսարանական պատվիրակության առաջին այցը Երևան

Հայ-ավստրիական կոնտակտային սեմինար

Ավտրիական Էրազմուս+ ազգային գործակալությունը (OeAD-GmbH) Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում Էրազմուս+ ազգային գրասենյակների աջակցությամբ կազմակերպում է մեկ շաբաթյա գործընկերային այց դեպի Հարավային Կովկասի երեք հանրապետություններ: Տարածաշրջան այցելելու հիմնական նպատակն է Էրազմուս+ դրամաշնորհների օգնությամբ ամրացնել ընթացիկ համագործակցություններն ու նոր կապեր հաստատել ավտրիական և հարավկովկասյան համալսարանների միջև:

Հայաստանյան այցը տեղի կունենա **մայիսի 16-17-ին** մայրաքաղաք Երևանում: Երկօրյա սեմինարի շրջանակներում մայիսի 16-ի հանդիպումը կկայանա ***Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում***, իսկ մայիսի 17-ինը՝ ***Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում***: Սեմինարի հիմնական նպատակներն են՝

- կողմերին ծանոթացնել Ավստրիայի և Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերի առանձնահատկություններին,
- **Էրազմուս+** Միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում նախաձեռնել ուսանողների (դասընթացներ, պրակտիկա) և բուհական անձնակազմի (դասավանդում, վերապատրաստում) երկկողմանի փոխանակումներ,
- **Էրազմուս+** Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման ծրագրային նոր գաղափարներ մշակել և դիմել դրամաշնորհային մրցույթին:
- հայ մասնակիցներին ծանոթացնել **Ավստրիայի զարգացման համագործակցության** APPEAR ծրագրի հնարավորություններին

Այցի շրջանակներում կներկայացվեն համալսարանների ենթակառուցվածքներն ու կրթական ծրագրերը, ինչպես նաև մասնակից երկրների լավագույն փորձի օրինակները: Բացի այդ, նախատեսված են ավստրիական գործընկերների կողմից երևանյան համալսարանների այցելություններ, որոնց միջոցով կստեղծվեն տեղական բուհերին մոտիկից ծանոթանալու և համագործակցության ծրագրեր մշակելու լայն հնարավորություններ: Ավստրիական պատվիրակությունը բաղկացած է 22 մասնակիցներից 12 բուհերից և ազգային գործակալությունից, իսկ հայաստանյան կողմից հանդիպմանը կմասնակցեն 45 ներկայացուցիչներ երևանյան և մարզային 20 բուհերից:

Երևանում կոնտակտային սեմինարի թիրախային խումբը ակադեմիական հանրության ներկայացուցիչներն են, ովքեր շահագրգռված են ավստրիացի գործընկերների հետ նոր գործընկերություններ հաստատելու և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ ծրագրի շրջանակներում համաձայնագրեր նախաձեռնելու ուղղությամբ:

Տեղական բոլոր լրատվամիջոցները հրավիրվում են մասնակցելու երկօրյա միջոցառմանը: Ողջունելի են նաև հրավերները հարցազրույցների, հեռուստատեսային և լրատվական եթերների: